# Արձանագրություն 4

**«Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ կարիքների համար «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/05» ծածկագրով Դեղորայքի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Վեդի

24.11.2025թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ**

**Ս. Խաչատրյան** – «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի փոխտնօրեն

**Անդամներ**

**Ա. Սիմոնյան**- «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դեղատան վարիչ

**Հ. Գաբրիելյան** - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահ

***Քարտուղար-գնումների համակարգող***

**Լ.Բազիկյան** - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գնումների համակարգող

1. **ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/05 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում շտկման ենթակա փաստաթղթերի գնահատման վերաբերյալ**

**(Ս. Խաչատրյան)**

Հիմք ընդունելով «ԱԷՄՁԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով բացակայում է 27-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և առաջնորդվելով 04 մայիսի 2017թ. N526-Ն Կառավարության որոշման 41-րդ կետի պահանջներով՝ հանձնաժողովը աճուրդն ամփոփվելուց հետո որոշում էր կայացրել 1 աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «ԱԷՄՁԻ» ՍՊԸ-ին շտկել առկա անհամապատասխանությունը:

Վերջինիս կողմից էլեկտրոնային աճուրդի համակարգ է ներմուծվել շտկման ենթակա ապրանքի ամբողջական նկարագիրը, «ԱԷՄՁԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված ապրանքի տեխնիկական բնութագիր՝ ապրանքի ամբողջական նկարագիրը, համապատասխանում է հրավերի պահանջներին:

Հանձնաժողովը որոշեց՝ մասնակցի հայտը գնահատել բավարար և ներկայացնել հետագա գնահատման:

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0**

2. **Մասնակիցների առաջարկած գների մասին**

**(Ս. Խաչատրյան)**

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացվում են կից հավելվածով.

Համաձայն կից ներկայացված գնային առաջարկների հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18 մայիսի 2017թվականի թիվ 534-Ն որոշման 19-րդ կետի 1-ին ենթակետը՝ Համակարգի կողմից մերժվել են Մասնակիցների հայտերը 3, 12, 16, 22, 24, 26, 29, 40, 49-րդ և 65-րդ չափաբաժինների մասով, քանի որ ներկայացված գնային առաջարկներն աճուրդն ամփոփելու պահի դրությամբ գերազանցում են ընթացակարգի շրջանակներում գնվելիք ապրանքների ձեռքբերման համար գնման հայտով սահմանված գնման գները:

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0**

3. **Հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին**

**(Ս. Խաչատրյան)**

**«ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/05»** ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման ապրանքների բնութագրի՝ օրենքով սահմանված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ –0**

**4. «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/05» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցների, չկայացած չափաբաժինների մասին**

**(Ս. Խաչատրյան)**

**Գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

**4.1 «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/05» ծածկագրով կազմակերպված ԷԱՃ ընթացակարգում ընտրված մասնակիցներ** ճանաչել

- **«Արֆարմացիա» ՓԲԸ**-ին - **2, 4-րդ և 30-րդ** չափաբաժինների մասով:
- **«Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ** -ին - **6, 7, 8, 9, 10, 11, 52-րդ և 59-րդ** չափաբաժինների մասով:
- **«Նատալի Ֆարմ» ՍՊԸ**-ին - **15, 17, 18, 37, 39, 41, 43, 46, 55, 56, 57, 61-րդ և 62-րդ** չափաբաժինների մասով:
- **«Տոնուս-Լես» ՍՊԸ**-ին - **19, 27, 28, 53-րդ** չափաբաժինների մասով:
- **«Արմենֆարմ» ՍՊԸ**-ին - **20-րդ** չափաբաժնի մասով:
- **«Իվաֆարմ» ՍՊԸ**-ին - **50-րդ** չափաբաժինների մասով:
- **«ԱԷՄՋԻ» ՍՊԸ**-ին - **21-րդ և 23-րդ** չափաբաժինների մասով:
- **ԱՁ Ռիտա Գասպարյան**-ին - **1-ին և 47-րդ** չափաբաժինների մասով:

**4.2 ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-26/05 ծածկագրով գնման ընթացակարգի չկայացման վերաբերյալ**

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/05 ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած 3, 12, 16, 22, 24, 26, 29, 40, 49-րդ և 65-րդ չափաբաժինների մասով, ինչպես նաև հայտարարել չկայացած 5, 13, 14, 25,31, 32, 33, 34, 35, 36, 38, 42, 44, 45, 48, 51, 54, 58, 60, 63-րդ և 63-րդ չափաբաժինների մասով՝ վերոնշյալ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն:

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0**

**5. «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/05» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման հրապարակման և անգործության ժամկետի մասին**

**(Ս. Խաչատրյան)**

«Գնումների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով, անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0**

**Հանձնաժողովի նախագահ՝** _____ **Ս.Խաչատրյան**

**Հանձնաժողովի անդամներ՝** _____ **Ա.Սիմոնյան**

_____ **Հ.Գաբրիելյան**

**Հանձնաժողովի քարտուղար՝** _____ **Լ.Բազիկյան**